ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 03.04.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/40

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ի կողմից 13.03.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/40 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Զոր Սամ Սաք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած 13.03.2018թ. բողոքով հայտնել է հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից լվացքի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին:

1-4-րդ չափաբաժինների մասով հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, իսկ 5-6-րդ չափաբաժինների մասով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.19-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով հայտ են ներկայացրել նաև «Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ն և «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն:

«Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն 19.12.2017թ. ներկայացրել է հայտում ներառվող՝ իր կողմից հաստատվող փաստաթղթերը: Քանի որ Ընթացակարգի հրավերով նախատեսվել էր, որ 1-4-րդ չափաբաժինների մասով հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, ուստի «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն որպես հայտի ապահովում կանխիկ փողի ձևով հայտով ներկայացրել է 19.12.2017թ. թիվ 1 վճարման հանձնարարականը (այսուհետ նաև՝ Հանձնարարական): Հանձնարարականը ստորագրվել և կնքվել է «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի տնօրենի կողմից, սակայն Հանձնարարականի վրա բացակայում է մասնակցի կողմից տվյալ փաստաթուղթը հաստատված լինելու փաստը ապացուցող էլեկտրոնային թվային ստորագրությունը՝ ինչը նախատեսված է Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.19-րդ ենթակետով:

Ընկերությունը նշել, որ ՀՀ ռեզիդենտ մնացած բոլոր մասնակիցների կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 20.12.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնարարականի վրա էլեկտրոնային թվային ստորագրության բացակայությունը չի արձանագրվել և այդ հիմքով վերջինիս հայտը չի մերժվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև որ՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային

թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է՝պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

գ. փոփոխելու ընդունված որոշումները.

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Այսպիսով, «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն 19.12.2017թ. ներկայացրել է հայտում ներառվող՝ իր կողմից հաստատվող փաստաթղթերը և որպես հայտի ապահովում կանխիկ փողի ձևով՝ հայտով ներկայացրել է 19.12.2017թ. թիվ 1 վճարման հանձնարարականը, որը ստորագրվել և կնքվել է «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի տնօրենի կողմից, սակայն Հանձնարարականի վրա բացակայել է մասնակցի կողմից տվյալ փաստաթուղթը հաստատված լինելու փաստը ապացուցող էլեկտրոնային թվային ստորագրությունը:

Վերոգրյալ իրավական հիմքերի և փաստական հանգամանքների վերլուծությունից հետևում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով, 41-րդ կետով և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.19-րդ ենթակետով սահմանված պահանջները, քանի որ

«Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կողմից 19.12.2017թ. թիվ 1 վճարման հանձնարարականի վրա բացակայել է էլեկտրոնային թվային ստորագրությունը, իսկ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները պարտավոր են հայտով ներկայացվող փաստաթղթերը վավերացնել էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար լվացքի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին մերժել «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ի լրումն բողոքի՝ Ընկերությունը 27.03.2018թ. գրություն է ներկայացրել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.12.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ի և «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես մասնակիցների կողմից ներկայացված հայտի ապահովման մեջ (կանխիկ փողի անդորրագրի ձևում) ՀՎՀՀ դաշտում առկա են ավել նիշեր, ինչի հիման վրա ընկերությունների հայտերը մերժվել են:

Վերոգրյալ մերժմամբ պայմանավորված «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն 13.02.2018թ. բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին (ԳԲԽ-ԷՍ-2018/23):

«Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն բողոքում նշել է, որ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի համար հայտ է ներկայացրել նաև «Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ն, որի հայտը նույնպես մերժվել է նույն պատճառաբանությամբ:

Խորհուրդն ուսումնասիրելով բողոքը գտել է, որ գնահատող հանձնաժողովը ընթացակարգին ներկայացված հայտի ապահովման անդորրագրում ՀՎՀՀ-ից առաջ ավել նիշերի առկայության հիմնավորմամբ մերժելով մասնակցի հայտը գործել է ոչ իրավաչափ, ինչով պայմանավորված «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի բողոքը բավարարել է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույն հիմքով գնահատող հանձնաժողովը նաև մերժել էր «Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ին, իսկ Խորհրդի որոշմամբ հանձնաժողովի այդ հիմքով

մերժումը որակվել է ոչ իրավաչափ, ուստի տվյալ պարագայում Ընկերությունն իր կողմից ներկայացված բողոքով չի անդրադառնում վերոհիշյալ մերժմանը:

Նկատի ունենալով, որ Խորհրդի որոշումը իրավապարտադիր է և գնահատող հանձնաժողովը պետք է դադարեցնի «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի և «Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ի այդ հիմքով հայտը մերժելու մասին որոշումը և քանի որ «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կողմից 19.12.2017թ. թիվ 1 վճարման հանձնարարականի վրա բացակայել է էլեկտրոնային թվային ստորագրությունը, ուստի այս պարագայում Ընկերությունը որպես 13.03.2018թ. բողոքով ներկայացված պահանջ՝ Խորհրդին խնդրել է նաև պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից լվացքի ծառայության ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին և պահանջներին չհամապատասխանող:

«Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 15.03.2018թ. ժամը 12:05-ի և 29.03.2018թ. ժամը 10:55-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>«Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն 15.03.2018թ. միջնորդություն է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին՝ խնդրելով վերջինիս ներգրավել որպես երրորդ կողմ:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 15.03.2018թ. միջանկյալ որոշմամբ «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի միջնորդությունը բավարարվել է:

«Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն Խորհրդին ուղղված 21.03.2018թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն մասնակցել է ՀՀ ՊՆ կողմից լվացքի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով

հրատապ բաց մրցույթին և հայտի ապահովումը ներկայացրել է կանխիկ փողի ձևով և որպես ապացույց հայտով ներկայացրել է «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից 19.12.2017թ. տրված թիվ 1 վճարման հանձնարարականը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է հրավերի պահանջներին բավարարող:

Սակայն ըստ «Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ի կողմից 13.03.2018թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/40 բողոքի, մրցույթի գնահատող հանձնաժողովը «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բավարար գնահատելիս, թույլ է տվել գնումների մասին ՀՀ օրենսդրության խախտում (տվյալ դեպքում Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի խախտում), քանզի «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի կողմից 19.12.2017թ. տրված թիվ 1 վճարման հանձնարարականը հաստատված չէ «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով:

Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով

կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

«Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն գտնում է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովը «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կոմից ներկայացված հայտը հրավերի պահանջներին բավարար գնահատելով՝ գործել է իրավաչափ, քանզի Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ մասնակցի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատում է միայն իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը, մինչդեռ բանկի կողմից տրված վճարման հանձնարարականը չի հանդիսանում ընկերության կողմից հաստատման ենթակա (Կարգի իմաստով հաստատվող) փաստաթուղթ, ուստի և չպետք է հաստատվի մասնակցի էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Ելնելով վերոգրյալից՝ «ՍելենաՍերվիս» ՀՁ ՍՊԸ-ն խնդրել է մերժել «Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը Խորհրդին ուղղված 20.03.2018թ. թիվ ԴՎԱ/957 գրությամբ հայտնել է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, տվյալ պարագայում «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովման կանխիկ փողի ձևով ներկայացված վճարման հանձնարարականը չի հանդիսանում մասնակցի կողմից

հաստատվող փաստաթուղթ, ուստի վերջինիս էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելը պարտադիր չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 15.03.2018թ. ժամը 12:05-ի և 29.03.2018թ. ժամը 10:55-ի նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ԳԲԽ-ԱՄ-2018/40 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-ԱՄ-2018/40 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար լվացքի ծառայությունների ձեռքբերման նպատակով Armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Ընթացակարգի 1-3-րդ չափաբաժինների մասով:

2. Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին: 1-4-րդ չափաբաժինների մասով հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, իսկ 5-6-րդ չափաբաժինների մասով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

3. «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն որպես կանխիկ փողի ձևով հայտի ապահովում ներկայացրել է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի կողմից 19.12.2017թ. տրված N 1 վճարման հանձնարարականը, որը հաստատված չէ մասնակցի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի 2.3 ենթակետի համաձայն՝ «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես Ընկերության կողմից ներկայացված հայտի ապահովման (կանխիկ փողի անդորրագրի ձևով) ՀՎՀՀ դաշտում առկա են ավել նիշեր: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի բողոքի հիման վրա 05.03.2018թ. թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/23 որոշմամբ որոշել է պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ին Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած ճանաչելու մասին համապատասխան որոշում:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ի 13.03.2018թ. բողոքը, «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի 21.03.2018թ. գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 20.03.2018թ. թիվ ԴՎԱ/957 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ, եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Այլ դեպքերում հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով: Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող

մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար լվացքի ծառայությունների ձեռքբերման նպատակով Armeps էլեկտրոնային համակարգի միջոցով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի 7-րդ կետի 7.1 ենթակետով սահմանվել է, որ ***մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում,*** որի չափը հավասար է հայտով ներկայացվող գնի հինգ տոկոսին: 1-4-րդ չափաբաժինների մասով հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, իսկ 5-6-րդ չափաբաժինների մասով՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Ընթացակարգի 1-3-րդ չափաբաժինների մասով:

«Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ն որպես կանխիկ փողի ձևով հայտի ապահովում ներկայացրել է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի կողմից 19.12.2017թ. տրված N 1 վճարման

հանձնարարականը, որը հաստատված չէ մասնակցի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Այսպես՝ Ընթացակարգի հրավերի 8.19-րդ կետը սահմանում է, որ տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի արտատպումը պետք է տեսանելի լինի փաստաթղթի վրա, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները <u>հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ.</u> իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Դրա հետ մեկտեղ Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները ***<u>հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:</u>***

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնակցի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվում են այն փաստաթղթերը, որոնք ներառված են հայտում և ***<u>ենթակա են հաստատման</u>*** մասնակցի կողմից: Տվյալ դեպքում Խորհուրդն արձանագրում է, որ «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կողմից որպես կանխիկ փողի ձևով հայտի ապահովում ներկայացված վճարման հանձնարարականը տրվել է «ՀայէկոնոմԲանկ» ԲԲԸ-ի կողմից, հետևաբար և ենթակա է հաստատման և տվյալ դեպքում հաստատվել է «ՀայէկոնոմԲանկ» ԲԲԸ-ի կողմից:

Խորհուրդը գտնում է, որ «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված վճարման հանձնարարականը, համաձայն Կարգի 32-րդ կետի

12-րդ ենթակետի և Ընթացակարգի հրավերի 8.19-րդ կետի, չի հանդիսանում մասնակցի կողմից հաստատման ենթակա փաստաթուղթ, քանի որ վերջինս արդեն իսկ հաստատված է այն հաստատելու իրավասություն ունեցող անձի կողմից:

Հետևաբար նման պայմաններում Խորհուրդն արձանագրում է, որ «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի կողմից որպես կանխիկ փողի ձևով հայտի ապահովում ներկայացված «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի կողմից տրված վճարման հանձնարարականի վրա «Սելենա Սերվիս» ՀՁ ՍՊԸ-ի էլեկտրոնային ստորագրության բացակայության հանգամանքը չի կարող դիտվել որպես մասնակցի հայտը մերժելու հիմք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է «Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ի կողմից 13.03.2018թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Զոր-Սամ-Սաք» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 13.03.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**